

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եղիա Տեմիրճիպաշյանը ծնվել է 1851 թ. մայիսի 8-ին, Հասգյուղում։ Սկզբնական կրթությունը ստանում է տեղի ներսիսյան վարժարանում, աշակերտելով ժամանակի հմուտ ու գիտակ մանկավարժներ Թովմաս Թերզյանին և Մադաթիա Գարագաշյանին։ 1867 թ. նա տեղափոխվում է Շահնազարյան վարժարան, որտեղ ուսմանը զուգընթաց Մ. Չերազի հետ աշխատում է որպես ուսուցչի օգնական։ Ուսման շրջանում Տեմիրճիպաշյանը «անհագ ծարավով ինկավ վիպական գրքերու վրա՝ նոր էլիոզ, Վերթեր, Գոռին, Ռերնէ, Ռաֆայել ևն, որոնք պատճառ եղան թերեւս իր պատանեկան հոգւոյն ալեծփանքին»¹։ Տակավին երիտասարդ Տեմիրճիպաշյանը զգում է կյանքի դառնությունը և նրան սկսում է տանջել համլետյան լինելիության դադափարը. «Այս աշխարհը անձուկ էր ինձ համար չէի կըրնար յարիլ կեանքին», — գրում է նա։ Դպրոցական տարիներին գրում է գրաբար լեզվով մահախոսական՝ Աղաթոն Գրիգոր էֆենդիի մահվան առթիվ, որը 1868 թ. տպագրվում է «Մասիսում»։ Այնուհետև գրում է (աշխարհաբար) Շահնազարյան վարժարանի ուսուցիչ Հովսեփ Փոլատի «Հարսանիք» վեպի առաջաբանը։ Շուտով թողնում է ուսումը և աշխատանքի անցնում բարձրագույն դասն գրաքննական բաժնում՝ իրեն գրագիր, այնուհետև հանրային շինության վարչական ժողովում՝ որպես բարտուղար։ Սակայն այդպիսի աշխատանքները գիտության ծարավ երիտասարդին չեն հրապուրում։ Նրա ձգտումն էր գնալ Եվրոպա, մոտիկից շփվել արևմտյան բաղադակրթության ու գիտության հետ։ Հարազատները, 1874 թ. առևտրական դասընթաց անցնելու միտումով, Տեմիրճիպաշյանին ուղարկում են Մարսել, միաժամանակ նպատակ ունենալով նրան հեռու պահել «վտանգավոր քննեցումներեն և կապելու իրական կեանքին»։

1876 թ. Ե. Տեմիրճիպաշյանը վերադառնում է Պոլիս և շատ չանցած սկսում է հրատարակել մի շարք աշխատություններ։ Նրա՝ «Ելիսկոպոսի մը գավազանեն ավելի զորավոր և երաժշտապետի մի ձպոտեն ավելի նրբուկերտ»² գրչի տակից դուրս են գալիս «Դամբարան» (1878), «Նոր կյանք» (1879), «Փիլիսոփայական բառարան (ժողովրդական նախափորձ)» (1879), «Փիլիսոփայական բառարան (ժողովրդական փորձ)» (1880), «Կրթական խնդրոյն վրայ թուղթ առ Պատրիարքն Հայոց ներսես Վարժապետեան» (1880) և այլն, որոնցում պարզորոշ դրսևորվում է Ե. Տեմիրճիպաշյանի դեմոկրատիկ մըր։

Այս շրջանում երևան են գալիս թոքախտի առաջին նշանները, սակայն Ե. Տեմիրճիպաշյանը համառորեն աշխատում է։ «Գիշերն արտասվելով և արյուն

¹ Հ. Մասիսում, վ. Ճանաչեան, Պատմութիւն արդի հայ գրականութեան, հ. 1, Վնեպիկ, Ս. Ղազար, 1953, էջ 3635։

² «Բիւզանդիոն» 15. VII. 1880։

թքելով յօդուած կղերի «Մասիսի» եւ «Թերմանի» համար³, — դառնութեամբ դրում է նաւ նույն տարիներին Ե. Տեմիրճիպաշյանը ծավալում է մանկավարժական լայն գործունեությունը 1882 թ. Օրթագյուղի հայկական վարժարանում կարդում է փիլիսոփայություն, աշխատում որպէս Բերայի դպրոցների տնտուշ եւ վաստակած դրամը բաշխում աղքատներին. «Տուտուցնութենն ու դրականութենն շահած դրամը աղքատներու համար էր»⁴, — դրում է Զ. Գալեմբերյանը:

Ե. Տեմիրճիպաշյանին շատ է մտահոգում երիտասարդ սերնդի կրթության հարցը: «Եթէ ցավ մը ունիմ այն ալ ինձ համար չէ, այլ Հասագյուղի մանուկ հայրենակցոցս համար, ոյց դաստիարակութիւնն անխնամ կթողնվի սկրթեալ ու կրթասեր»⁵ թաղական խորհրդո մը կողմանեմ⁶, — գրում է նա 1888 թ. 4. Պատմաշյանին հղած նամակներից մեկում:

Զնալած կյանքի ծանր պայմաններին, նա ձգտում է ստեղծել իր սեփական թերթը: Շուտով իրականանում է նրա երազանքը, որով էլ սկսվում է Տեմիրճիպաշյանի հասարակական գործունեության ամենաբեղուն շրջանը (1883—1890):

1883—1888 թթ. նա հրատարակում է «Գրական եւ իմաստասիրական շարժում» հանդեսը, որտեղ տպագրվում են միայն նրա հոդվածները՝ փիլիսոփայական-գրական, տնտեսագիտական, գիտական բնագավառների վերաբերյալ: 1884 թ. նրա տնօրինությանն է անցնում նաեւ Ասիական ընկերության օրգան «Երկրագունտ» ամսաթերթը, որը առաջին անգամ լույս էր տեսել 1860 թ., Մանչեստրում, Շահնազարյանի ջանքերով: 1870 թ. այն տեղափոխվում է Պոլիս եւ հրատարակվում Շահնազարյան վարժարանի աշակերտների կողմից: 1884 թ. Տեմիրճիպաշյանը ստանձնելով «Երկրագունտի» տնօրինությունը, այն հրատարակում է մինչև 1888 թ. նոյեմբերը: Ըստ Արփիարյանի՝ «այս ամսագիրը ավելի գրականացավ, բայց լոկ խմբագրին հօդուածներովը»⁶: «Երկրագունտին» թղթակցում են ժամանակի հայտնի մտավորականներ Ռ. Պերպերյանը, Ա. Փանոսյանը, Գր. Զոհրապը, Մարկոս Աղաբեգյանցը, Հ. Տեր-Գերվիշյանը եւ ուրիշները: Բազմաբեղուն մտավորականը համարյա նույն ժամանակահատվածում (1886 թ. հոկտեմբեր—1887 թ. ապրիլ) տնօրինում է նաեւ «Տնտես» հանդեսը:

80-ական թվականների վերջերից թուրքական գրաքննության օրգանները արգելում են ազգային մի շարք թերթերի ու ամսագրերի հրատարակությունը՝ այդ թվում նաեւ «Երկրագունտը», «Գրական եւ իմաստասիրական շարժում» հանդեսը: Եռանդուն մտավորականը 1889 թ. հրատարակում է «Դար» աշխատությունը, 1890 թ. գրում «Ճառ աղջկանց դաստիարակութեան վրայ, կամ ավելին ճառը», որի նպատակն էր ժողովրդին սովորեցնել «տնտեսավարութեան»:

1889 թ. Ե. Տեմիրճիպաշյանը լույս է ընծայում «Գաղղիերենէ ի հայերէն» գրքանի բառարան, որն ընդգրկում է շուրջ 500-ից ավելի նոր բառեր:

1897 թ. նա կրկին մեկնում է արտասահման, լինում է Վիեննայում,

³ «Մասիս» 1883, № 320:

⁴ «Հայաստանի կոնակ» 28. VI. 1958:

⁵ Կ. Բասմաշեան, Բանասիրական թղթակցութիւնք, Փարիզ, 1924, էջ 11:

⁶ Ա. Արփիարյան, Պատմութիւն ԺԹ. դարու Թուրքիոյ Հայոց գրականութեան, Գահիրէ, 1944, էջ 171:

Ժնևում, Բուդապեշտում, բայց չգտնելով հանգստություն, վերադառնում է Պոլիս՝ շարունակելով թղթակցել «Բյուզանդիոն», «Մասիս» և այլ թերթերի։ Նրա հոգվածները այս անգամ կրում էին ինքնապաշտպանական բնույթ։ Մշտավորականներից շատերը նրան համարում էին «եսամուլ գրագետ մը», կամ «գերասան», կամ «հիվանդ գրիչ մը» և այլն։ Ինչպես Գալեմքեբարյանն է նկատում, շնայած «ան հիվանդ հոգի մըն էր այլևս», նրա ինքնասպանության փորձը «գերասանական փորձ մը չէր, այլ դժբախտ իրականություն մը, զոր առաջ գործադրեց վերջապես այնքան դրական ձևով»⁷։

Ե. Տեմիրճիպաշյանը 1897 թ. դեկտեմբերին Սահակ Խանջյանին հղած նամակում դառնացած գրում է. «Տանջվե ու տանջվե։ Ու երբ հրապարակի վրայ դառնացեալ կերեիմ, դիս կմեղադրեն, ոմանք կհառաջանան մինչև իսկ կեղծ անվանեալ իմ մեկամաղձությունս»⁸։

90-ական թվականներից, հատկապես հայկական կոտորածների օրերին Ե. Տեմիրճիպաշյանը ապրում է խոր հուսաբեկում։ «Երբ անդրանիկ քրիստոնյա ժողովրդյան մեջ հանապազօրյա Ս. Բարդուղիմեոսի ջարդին անտարբեր մնայ, մա՛րթ է հոսալ թե ունինք ապագա»⁹, — գրում է նա Վահան Քյուրքչյանին հղած նամակում։

XIX դ. 90-ական թվականներին հայ մտավորականության համար ըստեղծվել էր արտակարգ ծանր դրություն։ Այդ մասին Ե. Տեմիրճիպաշյանը ցավով գրում է. «Ամեն անգամ, որ ամսական խնդրելու համար նամակ գրեմ, պիտ անիծեմ այն օրն, ուր ոտք կօխեցի վարժապետական ու գրական ասպարեզին մեջ»¹⁰։

Ազգի անելանելի դրությունը, կյանքի ծանր պայմանները, մոայլ ու դաժան իրականությունը և հյուժող թոքախտը Ե. Տեմիրճիպաշյանին մղում են ինքնասպանության։ «Իր մեջքի գօտիով ինքզինքը կկախե դրան վրայի պատուհանեն, վերջ տալով հոգեկան ու ֆիզիկական բոլոր տառապանքներուն»¹¹, հավատալով իր վերջին շրջանի հիվանդագին ու նիրվանայական պատրանքներին, «որի մասին այնքան շատ և զանազան ելեջներով կանչում էր ու աղաղակում»¹². — գրում էր Վրթ. Փափազյանը։

Օսմանյան սահմանադրության հռչակման օրը՝ 1908 թ. մայիսի 19-ին Շիրազի գերեզմանոցում հայ հասարակությունը հրաժեշտ տվեց Ե. Տեմիրճիպաշյանին։

Նրա մահից երկու տարի անց՝ Հրանտ Նազարյանցը «նիրվանայի հալքուրմի» միակ մտերիմն ու սրտակիցը, որը չի բաժանվել նրանից մինչև մահվան անդորրը, առանձին պրակով լույս է ընծայում «Եվդիա Տեմիրճիպաշյանի սիրային նամակները 1886—1889 թթ.» (Կ. Պոլիս, 1910)։

1955 թ. Փարիզում երախտագետ հայերի կողմից հրատարակվում է նրա «Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ» ժողովածուն։

Ե. Տեմիրճիպաշյանի փիլիսոփայական աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել XIX դ. վերջին տասնամյակում առաջացած հա-

7 Զ ա ր ու հ ի Գ ա լ Ե մ ք Ի ա ր Ե ա ն, Կեանքիս ճամբէն, Անթիլիաս, 1952, էջ 76։

8 Թ Ե ո ղ ի Կ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1913, էջ 35։

9 «Հայաստանի կոչնակ» 22. III 1958։

10 Չ. Ն ա ղ ա ր յ ա ն, Ե. Տեմիրճիպաշյանի սիրային նամակները, Կ. Պոլիս, 1910, էջ 77։

11 Ե. Տ Ե մ ի ր ճ ի պ ա շ յ ա ն, Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, Փարիզ, 1955, էջ 13։

12 Վ ր թ. Փ ա փ ա ղ Ե ա ն, Պատմութիւն Հայոց գրականութեան, Թիֆլիս, 1910, էջ 69։

սարակական բարդ հակասությունները՝ Մղձավանջային ու ծանր դրություն էր ստեղծվել Հայաստանում։ Արևմտահայությունը մատնված էր բախտի քմահաճույթին։ «Ավագ, հայություն չկա այլևս, հայ որբեր միայն կան։ Շատերու դավանանքն ջնջել մինչև վերջին հայն որպեսզի փրկվի Հայութիւնը»¹³, — գրել է Ե. Տեմիրճիպաշյանը։ Նա շուտով գիտակցում է, որ եվրոպական պետությունները չեն կարող օգնել հայ ազգին «հոս տիրող զգացումը դեռ շահախնդրությունն ու կրոնամոլությունն է»¹⁴, հանուն իրենց շահերի սրանք կարող են և օգնել, և կուլ տալ այդ դժբախտ ազգին, «ուստի պետք է արհամարհել դանոնք» և ասել թանկ Եվրոպիո պետությանքն ավելի մեծ է մեր ազգն»¹⁵։

Ե. Տեմիրճիպաշյանը կողմնակից չէր ազգային կուսակցությունների վարած ոչ ճիշտ քաղաքականությանը և հայ ազգի փրկությունը կապում էր իր սեփական ուժի հետ։ Նա համոզված էր, որ այսօր եթե չկա ազատություն «վաղն անշուշտ պիտի ըլլայ», այն ազգը, որը չի հանդուրժում բռնության լուծը, անպայման կթոթափի այն «զի կամենալն է կարենալ»¹⁶։ Իսկ որո՞նք են փրկության ուղիները։ Այստեղ է, որ Տեմիրճիպաշյանը չի կարողանում դուրս գալ բուրժուական դեմոկրատիզմի նեղ շրջանակներից և հայ ժողովրդի փրկությունը կապում է գիտության ու լուսավորության հետ, որն էլ պետք է կատարվի փրկ` հայի ձեռքով. «Մեր ազգին դժբախտ ճակատագիրն ավելի մեր, քան օտարաց գործն է»¹⁷։

Մանոթ էր, արդյոք, Ե. Տեմիրճիպաշյանը արևմտաեվրոպական երկրներում տեղի ունեցող այն հուժկու շարժումներին, որոնց ուժն ու ոգին մարքսիզմի քաղաքականությունն էր։ Նշան Պ. Սաաթճյանը գրում է. «Հայերեն և ստար լեզուներով հինգ հազար հատորե աւելի դիրքեր կարդացած ըլլալը հաստատող վկայություններ ալ պակաս չեն Եղիայի վերաբերմամբ»¹⁸։ Ե. Տեմիրճիպաշյանը ոչ միայն ծանոթ էր, այլև քաջատեղյակ մարքսիզմի ուսմունքին, չնայած ոչ մի տեղ նա չի օգտագործում Մարքսի անունը։ Ժամանակակիցների վկայությամբ` նրա մատենադարանում եղել են այնպիսի «վտանգավոր» գրքեր, որոնց մոտքը սուլթանական Թուրքիա խստիվ արգելված էր։ Բայց «Եղիա չէր ըսած թէ ինչպէ՞ս է ձեռք անցնել զանոնք քաղաքական այդ վտանգավոր օրերին»¹⁹։ Նրա գործերի մեծ մասը մեզ չի հասել, ոչնչացվել են քաղաքական պատճառներով, «եբը կապրեինք բռնավոր տարիներու, համիտյան սուրբնու ստվերին տակ»²⁰, — գրում է Զ. Գալեմբերյանը։

«Կոմունիստական մանիֆեստի» 1890 թ. մայիսի 1-ին գրած առաջաբանում էնգելսը գրում է. «Որպես կուրյոզ հիշատակեմ նաև, որ 1887 թ. Կոստանդնուպոլսի մի հրատարակչի առաջարկվել է «Մանիֆեստի» հայերեն թարգմանության ձեռագիրը. սակայն այդ բարի մարդը քաջություն չի ունեցել տպագրելու Մարքսի անունը կրող գործը և ավելի հաշմար է համարել, որ թարգմանիչը իրեն անվանի այդ գործի հեղինակը, որին, սակայն, թարգմա-

13 Ե. Տեմիրճիպաշյան, Արձակ էջեր, էջ 345։

14 Նույն տեղում, էջ 350։

15 Ե. Տեմիրճիպաշյան, Փիլիսոփայական բառարան, 4. Պոլիս, 1879, էջ 27։

16 Ե. Տեմիրճիպաշյան, Արձակ էջեր, էջ 350։

17 Նույն տեղում։

18 «Հայաստանի կոչնակ» 12. VI. 1958։

19 Նույն տեղում։

20 Զ. Գալեմբերյան, Կենսքիս ճամբին, էջ 78։

նիշը չի համաձայնել»²¹։ Այդ առթիվ Թ. Ավդալբեկյանը նկատել է, որ «Մանիֆեստի» հիշյալ թարգմանության ձեռնարկողը եղել է «Արևմտահայ անվանի գրականագետ Գրասեր Աստուր՝ Եղիա Տեմիրճիպաշյանը»²²։ Սա ոչ միայն ենթադրություն է, այլ իր մեջ պարունակում է ճշմարտություն։ Ե. Տեմիրճիպաշյանը ֆրանսերենից արևմտահայերեն առաջին անգամ փորձում է թարգմանել այս հանձարեղ երկը, սակայն «քաղաքական այդ վտանգավոր» տարիներին նրան չի հաջողվել հրապարակել այն։

Ինչպես նախամարքսյան մտածողներին, այնպես էլ Ե. Տեմիրճիպաշյանին չհաջողվեց տալ հասարակական ու փիլիսոփայական բոլոր հարցերի ճիշտ պատասխանը և թեպետ հակասական է նրա փիլիսոփայական աշխարհայացքը, այնուհանդերձ նշանակալից է նրա դերը հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ։

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯНА

С. А. АРУТЮНЯН

Р е з ю м е

Е. Темирчипашян (1851—1908) — известный западноармянский мыслитель и прогрессивный общественный деятель — в своих трудах защищал и развивал философский материализм. Полагают, что впервые он перевел на армянский язык и попытался издать «Манифест коммунистической партии».

Е. Темирчипашян, как мыслитель-демократ, выступал против армянского амирайства и церкви. Большое внимание он уделял вопросам народного образования. В издаваемых им журналах «Еркрагут» и «Гракан ев имагасиракан шаржум» (1883—1888) он опубликовал многочисленные статьи на философские, литературные, научно-экономические и другие темы.

Несмотря на то, что не во всех случаях он был в состоянии дать правильный ответ на выдвинутые им же вопросы, что объясняется известной ограниченностью его взглядов, тем не менее, значителен его вклад в развитие армянской общественной мысли.

²¹ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստ, Երևան, 1948, էջ 31.

²² Թ. Ավդալբեկյան, Կոմունիստական մանիֆեստի հայերեն թարգմանությունները 1887-ից 1924 թթ. (տե՛ս «Վերելք», 1924, № 4—5).